

լութիւն կը յարուցանէր, և թշնամութիւնք որ աւուր վրայ կ'աւելնային: Ես, կը զարմանամ միայն Միրամպոյի սրտոտութեան և անցողողդութեան վրայ՝ որով կը շարունակէ զպատերապիլ:

Այցելութիւնէն երկու օր վերջը, ջերմէ բռնուեցայ. Տիլլոն և Մուրֆի քիչ վերջը նոյն ունեցան:

Մեր առաջին խումք կազմող բեռնակիրքն մեկնած ըլլալով, անոնք զորս մեր հասնելու ատեն վարձեցինք, որոց ստակն ամսական էր, մոտածեցին թէ ժամանակն յարմար էր գործէ ետք կենալու, և կը պահանջէին որ երկու ամիս առաջ կանխիկ վճարուի իրենց: Որչափ կրցայ, դէմ զրիքայց տեսնալովթէ խմբովին դասալիք պիտի ըլլային մէկ ամիս մը կանխեցի. այսու հանդերձ յիսուն վաթսուն զոդի ընդունողներէն հաւասարապէս փախան:

Հարդ է ըսել թէ քիչ մը բարձր աստիճանի Արարքն, որչափ մեզի մարդասիրութիւնն էր ցուցընեին, և ծառայութիւններ կ'ընէին, ստորակարգեալ վաճառականք ձեռքի տակէն ամեն կարելի եղած արգելք կը հանէին Ոչ միայն զմեր բեռնակիրքն ՚ի դասալութիւն կը հրապութիւն, այլ նաև իրենց կամացը գէմ հետերնին կ'առնուին: Այս եղածներէն մէկն զիս շատ վշտացուց: Մեր մարդիկներէն շատն, յետ բաւականապէս խմենուն, կարաւան մը զիխոյն ետեւէն զացին որ պիտի մեկնէր, և ինքը զիտէր որ անոնք մեր մարդիկն էին:

Ղրկեցի իմ մարդիկս գնտըռելու. պատասխան ընդունեցայ, թէ զանոնք չենք թողուր մինչև եսյանձն չառնու իրաքանչիրին համար երեք տողի վճարելու, պատրուակաւ որ առաջ իրենց այսպիսի խոստումն եղած էր:

Այսպիսի անիրաւութիւն մը չուզելով յանձն առնուէլ, կառավարողին գիմեցի, որ պատճան իմացաւ և հրամայեց որ բակազիներն յետո ուղարկուին ինչպէս որ տարած էին:

Բայց գործը լմննալէն առաջ դարձեալ ջերմ եկաւ վրաս, և Տիլլոն գործին վրայ ստոյդ տեղեկութիւն չունենալով, տուաւ կերպասը: Երբ փարատեցաւ ջերմն, ցաւով իմացայ, որ ոչ միայն կորուած էր կերպասն այլ նաև զմարդիկն ալ չէին թողուցած, մանաւանդ թէ վիզերն չուան անցրնելով, հետերնին տարած էին:

Ցետ սակաւուց, Մգեղացիէն զրկուած կարաւան մը, որ Ուկանդայի գլուխն էր, սըր Սամուէլ Պէքէրի նամակ մը բերաւ Լիվինկուդոնի երեսագրով Մտածեցի թէ ներելի էր ինձի բանալ այս նամակը, որ ճանապարհորդին վրայ կրնար ինձի տեղեկութիւն տալ: Գորդէ Ֆաղիրոյէ ուղղուած էր և սըր Սամուէլի գասպար—Ռէկայի (Գամրագի) հետ ունեցած պատերազմը կը յիշտակէր, որ Ունիորոյի գլաւաւորն էր, յորում շատ մարդ կորսընցուցեր էր, Մգեղաս սըր Սամուէլի օգներ էր, և ասով զիւրութեամբ կրցեր էր յառաջ անցնիլ:

Կը շարունակոյ.

Այնիւ մետաղաց վաձառականութիւնք. — Մինչև Ամերիկայի գիւտը, ազնիւ մետաղաց շարժմանը կը հասնէր միլիարտ մը Փր. այսինքն է, 700 միլիոն Փր. արծաթոյ և 500 միլիոն Փր.: ոսկոյ: Ի 1550է ց1848 աճում մ'եղաւ, որ ելաւ մինչև 44 միլիարտ, այսինքն է, 30 միլիարտ ոսկոյ և 44 արծաթոյ: Սիսկերիոյ, Գալիֆորնիոյ և Աւստրալիոյ ոսկերեր հանգեցրյալունելէն ետքը, հանուած ոսկոյ քանակութիւնը շատ աւելի գերազանցեց քան զարծաթը, և այս այնշափ ճշմարիտ է, որ միայն վեց տարուան մէջ, 1846էն ց1852, ոսկոյ բերքը 170 միլիարտ ֆրանքէն ելաւ ց500 միլիարտ, որ է երեքպատիկն: Միայն 1878

տարին կը բերէր, աշխարհիս բոլոր հանքաց մէջ, 77 միլիարտ Փր. գումարի: Ամեն տարի 280 միլիոն գումարի ոսկի կը գործածուի. Գաղղիս կը գործածէ 70 միլիոն գումարի. Միացեալ Նահանգք, Ստորին Նահանգք, Գանատան և Աւստրալիա 60 միլիոնի. Ռուսաստան, Գերմանիա, Աւստրիա և իտալիա 70 միլիոնի. և Անգղիս 6 միլիոն լիրա ստեղինի (150 միլիոն Փր.) և երջի 20 տարիներու մէջ ոսկոյ և արծաթոյ վաճառականութիւնը աւելցաւ 9 առ 100 Անգղիս համար, 164 Գաղղիս համար, 277 Պելճիոյ համար, 279 Ռուսաստանի համար, 245 Աւստրիոյ համար և 591 Խտալիոյ համար: